

Բանալի բառեր՝ ՓՄՁ, դասակարգում, կառավարում, որակական, քանակական, ցուցանիշներ, հատույթ, ակտիվներ:

ՀՏԴ 658.1:338

ՓՄՁ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության թեմա՝
**Փոքր և միջին ձեռնարկությունների կառավարման
հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները 33-ում**

Մանե ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Երթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

Գիտական ղեկավար՝
Դավիթ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր

Ձեռնարկատիրությունը շուկայական տնտեսության հիմքն է, որն ապահովելով նյութական և ոչ նյութական բարիքների արտադրությունը, լուծում է նաև ավելի խորը խնդիրներ՝ ուղղված նոր աշխատատեղերի ստեղծմանը, տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացմանը և բնակչության կենսամակարդակի ավելացմանը: Ձեռնարկատիրությունը հանդես է գալիս որպես հասարակական կյանքի բոլոր բաղադրիչները՝ գիտությունը, կրթությունը, արտադրությունը, սպառումն ու սոցիալական ապահովությունը կապակցող օղակ: Ձեռնարկատիրությունը նաև շուկայական մտածողության հիմքն է, ապրելակերպ և աշխարհայացք, որը մարդկանց դրդում է դեպի տնտեսական և ստեղծարար գործունեություն: Ձեռնարկատիրությունը տնտեսության շոգեքարշն է, նրա վրա են հիմնված ֆինանսական համակարգը, հարկազանձումն ու պետական եկամուտների ձևավորումը, որով պայմանավորված ձեռնարկատիրությանը առնչվող հարցերը անընդհատ գտնվում են տնտեսագետների և հասարակության ուշադրության կենտրոնում:

Նշված գործառնությունների իրականացմանը կազմակերպության տարբեր տարատեսակները տարբեր կերպ են մասնակցություն ունենում: Այս առումով կարևոր նշանակություն ունի կազմակերպությունների դասակարգումը, որի հիման վրա արդեն հնարավոր կլինի պետական բաղադրանքային նպատակաուղղմամբ առանձին խնդիրների լուծման գործում առավել մեծ նշանակություն ունեցող կազմակերպությունների թիրախավորումը:

Կազմակերպությունների դասակարգման հիմքում դրվող չափանիշների ընտրության հարցում անհրաժեշտ է կողմնորոշվել այն խնդիրների շրջանակով, որոնք պետք է լուծվեն կոնկրետ հետազոտության իրականացման ընթացքում: Տնտեսագիտական հետազոտություններում առավել հաճախ օգտագործվում է կազմակերպությունների դասակարգումն ըստ չափերի: Ընդհանուր առմամբ, կազմակերպությունների՝ ըստ չափերի դասակարգումը տարբեր երկրներում իրականացվում է իր առանձնահատկություններով, սակայն կարող ենք արձանագրել, որ դրանք հիմնականում հանգում են բոլոր կազմակերպությունները գերփոքր, փոքր, միջին և խոշոր կազմակերպությունների խմբերում բաշխմանը: Որոշ, հատկապես անգլախոս և մի շարք ասիական երկրներում կիրառվում է ձեռնարկատիրության միայն փոքր տարատեսակը խոշորից առանձնացնելու տարբերակը՝ օգտագործելով «Փոքր բիզնես» (small business) հասկացությունը, մինչդեռ արևմտյան եվրոպայի երկրներում ավելի հաճախ կիրառվում է «փոքր և միջին ձեռնարկությունների» (Small and Medium Enterprises) և խոշորների տարանջատման տարբերակը: Ամեն դեպքում, հարկ է արձանագրել, որ նման դեպքերում ՓՄՁ և փոքր ձեռնարկատիրության վերաբերյալ դատողությունները ընդհանրական են, քանի որ արտահայտում են խոշոր բիզնեսից փոքր ձեռնարկատիրության տարբերվելու փիլիսոփայությունը: Հայաստանում նույնպես օգտագործվում է կազմակերպությունները ՓՄՁ և խոշորների տարանջատման պրակտիկան:

Փոքր ձեռնարկատիրության հասկացությունը լայնորեն կիրառվում է սոցիալ տնտեսական տարբեր հետազոտություններում, հրապարակումներում, ուսումնասիրություններում և այլ աղբյուրներում, և չնայած դրան՝ փոքր ձեռնարկատիրության հասկացությունը մինչ այժմ չունի հստակ սահմանում¹: ՓՄՁ սահմանման վերաբերյալ հանդես են եկել բազմաթիվ տնտեսագետներ, որոնք դրա սահմանման ժամանակ առաջնորդվել են ձեռնարկության այս կամ այն հատկանիշի կարևորմամբ²: Տարբեր հեղինակներ հանգել են այն եզրակացությանը, որ փոքր ձեռնարկատիրության սահմանումը չափազանց բարդ խնդիր է, քանի որ ըստ քննարկման բովանդակության տարբեր են փոքր ձեռնարկատիրության տարանջատման նպատակները³: Օրինակ՝ հարկային խնդիրների ուսումնասիրության ժամանակ փոքր ձեռնարկատիրության տարանջատման ժամանակ առաջնային նշանակություն են ստանում հարկվող բազայի և հարկվող շրջանառության վերաբերյալ դատողությունները, զբաղվածության խնդիրների քննարկման ժամանակ՝ աշխատողների թվաքանակը և այլն: Այդ պատճառով փոքր ձեռնարկատիրության ելույթն ցանկացած սահմանում, որը կփորձի միանշանակ սահմանել փոքր ձեռնարկատիրության ելույթը և փիլիսոփայությունը, ի սկզբանե դատապարտված է հիմնավոր քննադատության:

Փոքր ձեռնարկատիրության սահմանման ժամանակ առավել հաճախ շեշտվում է աշխատողների սահմանափակ թվաքանակը⁴: Նմանատիպ սահմանում է տալիս նաև Նովկովը, ով աշխատակիցների սահմանափակության հետ մեկտեղ

¹ Мукосеев Д.В. Экономическая сущность и критерии определения малого предпринимательства // Современные научные исследования и инновации. 2012. № 5

² Ավագյան Ռ., Փոքր բիզնեսի ելույթն առանձնացման չափանիշները: Հայաստան. Ֆինանսներ և Եկոնոմիկա, #1-2 (102-103), հունվար-փետրվար 2009, էջ 59:

³ Ермилова Г. Сравнительный анализ систем статистического учета малых предприятий в России и в странах ЕС. //Вопросы статистики. 1998г. №7, с. 13.

⁴ Райзберг Б. А., Лозовский Л. Ш., Стародубцева Е. Б., Современный экономический словарь. - 6-е изд., перераб. и доп. - М.: ИНФРА-М, 2011, стр. 85.

ավելացնում է նաև ապրանքաշրջանառության սահմանափակ ծավալի հասկացությունը⁵: Ընդհանրացնելով տարբեր արդյունքներում ՓՄՁ ձեռնարկությունները բնորոշման հիմքում դրվող ցուցանիշների համակարգը՝ կարելի է դրանք համախմբել ըստ քանակական և որակական ցուցանիշների խմբերում:

ՓՄՁ ձեռնարկությունների բնորոշման քանակական ցուցանիշները առավել պարզ են, հիմնված են կազմակերպության վերաբերող չափելի բնութագրիչների վրա, ինչպիսիք են աշխատակիցների թվաքանակը, շահույթի մեծությունը, տարեկան շրջանառության ծավալը, ակտիվների միջին տարեկան հաշվեկշռային մեծությունը և այլն⁶: Քանակական ցուցանիշների կիրառման կողմակիցների հիմնական փաստարկները վերաբերում են դրանց չափելիության, չափման համար ունիվերսալ մեթոդաբանության առկայության, կազմակերպությունների համեմատելիության գործոններին, որոնց պայմաններում հնարավոր է օբյեկտիվորեն չափել տարբեր կազմակերպությունների մեծությունը՝ ընդգրկելով այն ՓՄՁ կամ խոշոր ձեռնարկությունների շարքում: Սակայն դա չի նշանակում, որ քանակական ցուցանիշները չունեն թերություններ: Քանակական ցուցանիշների կիրառման ընդդիմախոսները շեշտում են այն հանգամանքը, որ նման ցուցանիշների կիրառությունը թույլ չի տալիս հաշվի առնել կազմակերպությունների ճյուղային առանձնահատկությունները, մասնավորապես, աշխատատարության և կապիտալատարության հանգամանքները: Ավելին, միայն քանակական ցուցանիշներով առաջնորդվելիս խիստ դժվարանում է, և որոշ դեպքերում անհնարին է դառնում միջազգային համեմատությունների իրականացումը, քանի որ միևնույն չափի կազմակերպությունը փոքր պետության պայմաններում կարող է գերիշխող դիրքեր ունենալ շուկայում, այն դեպքում, երբ նույն բնութագրերով կազմակերպությունը մեծ պետության պայմաններում ինքը մրցակցության պաշտպանության և պետական աջակցության մեխանիզմների կարիք կարող է ունենալ:

Նման թերություններով պայմանավորված շատ մասնագետներ առաջ են քաշում այն գաղափարը, որ ՓՄՁ և խոշոր ձեռնարկատիրության առանձնացման հիմքում պետք է դնել որակական այնպիսի ցուցանիշներ, որոնք կարտահայտեն տվյալ կազմակերպության տնտեսական, սոցիալական, մրցակցային, հումանիտար և այլ ասպեկտները: Կապված որակական ցուցանիշների լայն ընդգրկման հետ՝ հետազոտողները ՓՄՁ տարանջատման շատ ավելի մեծ թվով չափանիշներ են առաջադրում, քան քանակական չափորոշիչների դեպքում: ՓՄՁ որակական չափանիշներն ավելի սուբյեկտիվ բնույթ ունեն, հիմնված են հետազոտողի անձնական պատկերացումների, մասնագիտական հետաքրքրությունների և քննարկվող խնդիրների շրջանակներից: Որակական չափանիշների քննարկման ժամանակ կարող է շեշտվել ինչպես կազմակերպության ներքին միջավայրը, այնպես էլ նրա տեղը և դիրքը տնտեսական միջավայրում:

Ընդհանուր առմամբ, համակարգելով տարբեր հեղինակների կողմից ՓՄՁ սուբյեկտների բնորոշման որակական ցուցանիշներ, կարելի է առանձնացնել առավել հաճախ հանդիպող հետևյալ բնութագրիչները.

- արտադրվող ապրանքատեսականու փոքրաթիվ լինելը,
- Նյութական և ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունը,
- կառավարման համակարգի պարզ կառուցվածքը,
- կառավարման գործընթացին հիմնադիրների կամ սեփականատերերին անմիջական մասնակցությունը,
- ղեկավարների և ենթակաների միջև փոխհարաբերությունների ոչ ֆորմալ բնույթը,
- մատակարարների և իրացման շուկաների սահմանափակությունը և այլն:

Շատ դեպքերում ՓՄՁ-ների տարանջատումը գործնական առումով իրականացվում է տվյալ պետության իրավական փաստաթղթերով սահմանված չափանիշների համաձայն⁷: Նման մոտեցումը արդարացվում է այն պարզ տրամաբանությամբ, որ հետազոտությունները և դրանցից բխող եզրակացությունները պետք է կիրառություն գտնեն կոնկրետ պետության կամ տարածաշրջանի մասշտաբներում, հետևաբար իրականությունից կտրված, թեկուզև գիտականորեն ավելի հիմնավորված մոտեցումներով առանձնացված կազմակերպությունների համար տնտեսական քաղաքականության մշակումը գործնականում չի կիրառվել իրական կյանքում: Այս առումով անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել ԶՅ-ում ՓՄՁ տարանջատման իրավական հիմքերը, մասնավորապես ԶՅ-ում ներդրված ՓՄՁ համարվելու չափանիշները:

Մինչև 2000թ Յայաստանում ՓՄՁ դասակարգման համար չէին գործում իրավական նորմեր: 2000թ. ընդունված «Փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ԶՅ օրենքով առաջին անգամ սահմանվեցին ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափանիշներ⁸: Օրենքը, ի թիվս ՓՄՁ սուբյեկտների դասակարգման հիմքերի ձևավորմանը, նպատակ ուներ սահմանել նաև այդ ոլորտին պետական աջակցության հիմնական ուղղությունները և պետական քաղաքականության իրականացման սկզբունքները:

Ընդունված օրենսդրությամբ Յայաստանում ՓՄՁ-երի դասակարգման հիմքում դրվեց աշխատողների թվաքանակի քանակական ցուցանիշը՝ համարելով այն ձեռնարկության գործունեության ոլորտը բնութագրող որակական ցուցանիշով, ըստ որի սահմանվեցին ՓՄՁ սուբյեկտների երեք խմբեր՝ գերփոքր, փոքր և միջին կազմակերպություններ: Ձեռնարկությունների գերփոքր խմբում ներառվեցին մինչև 5, փոքրերի խմբում՝ 15-50, և միջինների խմբում՝ 30-100 աշխատող ունեցող ձեռնարկությունները (Աղյուսակ 1):

Աղյուսակում 1-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ ճյուղային պատկանելությունից կախված միևնույն թվով աշխատակիցներ ունեցող կազմակերպությունը կարող էր դասվել ինչպես փոքր, այնպես էլ միջին և խոշոր կազմակերպությունների շարքին:

Զարկ է նշել, որ կազմակերպությունները ՓՄՁ տեսանկյունից դասակարգելիս աշխարհում, որպես կանոն, չեն առաջնորդվում բացառապես աշխատակիցների թվաքանակի ցուցանիշով: Փոխարենը օգտագործվում են համակցված ցուցանիշներ՝ հաշվի առնելով նաև այլ գործոններ: Օրինակ՝ Եվրամիությունում ընդունված չափանիշների համաձայն գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների չափորոշիչների կառուցվածքում, ի թիվս աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակի, օգտագործվում է նաև տարեկան շրջանառության և ակտիվների հաշվեկշռային արժեքի ցուցանիշները (աղյուսակ 2):

⁵ Новиков, В.А. Практическая рыночная экономика. Словарь. Толкование 4000 терминов / В.А. Новиков. - М. : Флинта: Московский психолого-социальный ин-т, 1999, стр. 163.

⁶ Bird R.M., Wallace S., Is It Really So Hard to Tax the Hard-to-Tax? The Context and Role of Presumptive Taxes. Prepared for a Conference on The Hard to Tax Sector, International Studies Program, Andrew Young School of Policy Studies Stone Mountain, Georgia, May 15-16, 2003, p. 19.

⁷ Виленский А. В., Макроэкономические институциональные ограничения развития российского малого предпринимательства. М., Наука, 2007, 237 с.

⁸ ԶՅ օրենքը փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին: ԶՕ-12.1, ԶՅՊՏ 2000.12.30/33(131), 05.12.2000:

Աղյուսակ 1.

ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչները 33-ում, 2000-2010թթ գործող չափորոշիչներով

Ոլորտ	ՓՄՁ սուբյեկտներում աշխատողների թվաքանակը (մարդ)		
	Գերփոքր	Փոքր	Միջին
Արդյունաբերություն և նյութական արտադրության այլ ճյուղեր	5	50	100
Շինարարություն և էներգետիկա	5	25	50
Գիտություն և կրթություն	5	25	50
Տրանսպորտ, առևտուր և ծառայություն	5	15	30

Աղյուսակ 2.

Եվրամիությունում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչները⁹

ՓՄՁ սուբյեկտներ	Չափորոշիչներ			Ակտիվների Չափվելու առժեքը, մլն եվրո
	Աշխատողների թվաքանակը, մարդ	Տարեկան շրջանառությունը, մլն եվրո	կամ	
Գերփոքր	10	2	կամ	2
Փոքր	50	10		10
Միջին	250	50		43

Աղյուսակներ 1-ի և 2-ի համադրումը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ 2000թ-ին ընդունված ՓՄՁ պետական աջակցության մասին օրենսդրությամբ սահմանված չափանիշները համադրելի չէին Եվրամիությունում ընդունված չափանիշների հետ: Դրանց ընդհանրությունը կայանում էր միայն աշխատողների թվաքանակի վերաբերյալ ցուցանիշի երկուստեք ընդգրկման մեջ: Ընդ որում եթե 33 իրականության մեջ դրան զուգահեռ օգտագործվում էր որակական բնութագրիչ՝ ձեռնարկության ճյուղային պատկանելիությունը, ապա Եվրոպական մոտեցմամբ կարևորություն էր տրվում քանակական ցուցանիշներին, մասնավորապես շրջանառությանը և ակտիվների մեծությանը, որոնք երկուսն էլ հանդես են գալիս որպես հաշվապահական ցուցանիշներ:

2010թ-ին վերը նշված օրենքում կատարված փոփոխություններով փոփոխվեցին նաև ՓՄՁ դասակարգման ցուցանիշները¹⁰: Օրենսդրական նախաձեռնության հիմնավորման մեջ ամրագրված էր, որ նոր դասակարգման սկզբունքների ներդրումը նպատակ ունի համադրելի դարձնել Հայաստանում և Եվրոպայում կիրառվող մոտեցումները: Ինչպես և Եվրոպայում Հայաստանում անցում կատարվեց ՓՄՁ դասակարգման ժամանակ զուտ քանակական ցուցանիշներով առաջնորդվելու սկզբունքին, ինչը որոշակի առումով կարելի է ներկայացնել որպես հետընթաց: Ներդրված նոր մոտեցումները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3.

Հայաստանում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչները, 2011թ. հետո

ՓՄՁ սուբյեկտներ	Չափորոշիչներ			Նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվվելու առժեքը, մլն դրամ
	Աշխատողների թվաքանակը, մարդ	Նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթ, մլն դրամ	կամ	
Գերփոքր	10	100	կամ	100
Փոքր	50	500		500
Միջին	250	1500		1000

Աղյուսակներ 2-ի և 3-ի համադրությունը ցույց է տալիս, որ 33-ում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչների անվանացանկը նույնությամբ կրկնում է Եվրոպական միությունում ընդունված մոտեցումը: Սակայն միևնույն ժամանակ՝ այդ չափորոշիչների թվային արժեքների համեմատումը թույլ է տալիս եզրակացնել, որ Հայաստանի և Եվրամիության դասակարգման մոտեցումների համարժեքացումը միայն տեխնիկական խնդիր է լուծում, և որոշ վերապահումներով կարող է միայն պարզեցնել վիճակագրական տվյալների համադրելիության ապահովման գործընթացը¹¹:

Այսպես, ինչպես և Եվրամիությունում, Հայաստանում նոր մոտեցմամբ գերփոքր, փոքր և միջին կազմակերպությունների համար սահմանվեցին աշխատողների համապատասխանաբար 10, 50 և 250 մարդու ցուցանիշներ, մինչդեռ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթի և ակտիվների հաշվվելու առժեքի սահմանաչափերը շուրջ 10-23 անգամ փոքր սահմանվեցին Եվրոպական ցուցանիշներից: Համապատասխան տվյալները ներկայացված են աղյուսակ 4-ում:

⁹ User guide to the SME Definition. European Commission, Luxembourg: Publications Office of the European Union (ISBN 978-92-79-45301-4), 2015, p. 11.

¹⁰ Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» 33 օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին 33 Օրենք: 30-142-Ն ՀՀՊՏ 2010.11.10/57(791) Հոդ.1248, 05.10.2010:

¹¹ Դուլյան Ռ., Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման վիճակը Հայաստանի Հանրապետությունում: Հայաստան. Ֆինանսներ և Էկոնոմիկա, # 6 (132) հունիս, 2011, էջ 29:

Աղյուսակ 4. Հայաստանում և Եվրամիությունում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչների համեմատությունը, 2011թ. հետո¹²

ՓՄՁ սուբյեկտներ	Աշխատողների թվաքանակը, մարդ	Նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթ, մլն եվրո (ԵՄ համեմատությամբ)	Նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը, մլն եվրո (ԵՄ համեմատությամբ)
Գերփոքր	10	0.19 (փոքր է 10.6 անգամ)	0.19 (փոքր է 10.6 անգամ)
Փոքր	50	0.94 (փոքր է 10.6 անգամ)	0.94 (փոքր է 10.6 անգամ)
Միջին	250	2.82 (փոքր է 17.7 անգամ)	1.88 (փոքր է 22.9 անգամ)

Որպեսզի ավելի հստակ պատկերացնենք նշված տարբերության տնտեսագիտական բովանդակությունը, աղյուսակ 5-ում ներկայացված են գերփոքր, փոքր և միջին կազմակերպություններում մեկ աշխատողի հաշվով ստացված հասույթի և ակտիվների հաշվեկշռային արժեքի մեծությունները Հայաստանի չափանիշներով:

Աղյուսակ 5. Հայաստանում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչները, 2011թ. հետո¹³

ՓՄՁ սուբյեկտներ	Աշխատողների թվաքանակը, մարդ	1 աշխատակցի հաշվով ստացված տարեկան հասույթ, մլն դրամ	1 աշխատակցի հաշվով ակտիվների հաշվեկշռային արժեքը, մլն դրամ
Գերփոքր	10	10	10
Փոքր	50	10	10
Միջին	250	6	4

Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ գերփոքր, փոքր և միջին կազմակերպություններում մեկ աշխատողի հաշվով տարեկան հասույթը կազմում է համապատասխանաբար 10 մլն, 10 մլն և 6 մլն դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ համապատասխանաբար 10 մլն, 10 մլն և 4 մլն դրամ: Նման ցուցանիշների պայմաններում կարելի է պնդել, Հայաստանում միջին ձեռնարկատիրությունն որպես օրենսդրությամբ սահմանված տարատեսակ վիճելի հասկացություն է, քանի որ անգամ աշխատակցին միջին աշխատավարձ վճարելու պայմաններում կազմակերպությունը պետք է աշխատի շատ բարձր հավելյալ արժեք ստեղծելու պայմաններում: Ավելին նման տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում կազմակերպությունը ՓՄՁ կհամարվի այնքան ժամանակ, քանի դեռ գործում է շատ ցածր արդյունավետությամբ՝ ապահովելով մեկ աշխատակցի հաշվով ցածր իրացման շրջանառություն և ցածր կապիտալազնվածություն: Կազմակերպության արդյունավետության բարձրացման դեպքում, մեկ աշխատակցի հաշվով իրացման շրջանառությունը և կապիտալազնվածության ավելանալուն զուգահեռ, կազմակերպությունը մեխանիկորեն կդադարի համարվել փոքր և միջին ձեռնարկություն և օգտվել պետական աջակցությունից, ինչը նույնպես անտրամաբանական է: Ակտիվների եկամտաբերության ցուցանիշը նույն նկարագրված սցենարում պետք է կազմի 100-150 տոկոս, ինչը նույնպես անհասանելի ցուցանիշ է:

Ակնհայտ է, որ Հայաստանի և Եվրամիության ՓՄՁ չափորոշիչների միասնականացումը չի նպաստել իր հիմնական խնդրի լուծմանը, որի բովանդակությունը հանգում է ՓՄՁ-երի կատարած կարևորագույն գործառնություններով պայմանավորված պետական աջակցության թիրախային խմբերի ընտրությունը: ՓՄՁ ձեռնարկությունների աջակցության հիմքում պետք է դրվեն իրատեսական նպատակներ, ուղղված շուկայական տնտեսության բացթողումների վերացմանն ու ազգային շահերից բխող տնտեսական կառուցվածքի ձևավորմանը, քանի որ դրանք կարևոր դեր են խաղում սոցիալական, հարկային, զբաղվածության ապահովման և ընդհանրապես ՀՆԱ-ի ձևավորման գործում¹⁴: ՓՄՁ ձեռնարկությունների դասակարգման ժամանակ պետք է հաշվի առնել տվյալ երկրի տնտեսական առանձնահատկությունները, քանի որ միևնույն չափանիշներով բնութագրվող ձեռնարկությունները տարբեր երկրներում կարող են տարբեր մրցակցային դիրքեր գրավել: Ի վերջո ՓՄՁ-ների դասակարգման նպատակը պետական աջակցության մեխանիզմների թիրախավորումն է, և որևէ կազմակերպություն, որը գերիշխող դիրք ունի շուկայում և հնարավորություն ունի ազդելու մրցակիցների վրա՝ չպետք է օգտվի պետական աջակցության մեխանիզմներից և արտոնություններից՝ անկախ նրանից՝ համապատասխանում է այն ՓՄՁ չափանիշներին, թե ոչ:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Հայաստանում օգտագործվող ՓՄՁ սուբյեկտների դասակարգման համակարգը թերի է և իրականությունից կտրված: ՓՄՁ-ների դասակարգման համակարգի կատարելագործման հիմքում կարող են դրվել մի քանի մոտեցումներ՝

1. ՓՄՁ չափորոշիչների քանակական ցուցանիշների համապատասխանեցում տնտեսական իրողությունների կամ Եվրոպական չափանիշներին,
2. ՓՄՁ դասակարգման մեջ միջին ձեռնարկատիրության հասկացության վերացում և փոքր ձեռնարկատիրության առանձնացում,
3. ՓՄՁ դասակարգման մեջ որակական ցուցանիշների (օրինակ՝ ճյուղային պատկանելիության) ներառում:

ՓՄՁ դասակարգման արդյունավետ մեխանիզմների ներդրումը թույլ կտա ավելի բարձր արդյունավետությամբ ուղղորդել պետական բյուջեից ֆինանսավորվող միջոցառումների շարքը, ինչը թույլ կտա ավելի արագ լուծել ՓՄՁ ուսերին դրված խնդիրները: Հայաստանի ներկայիս տնտեսական պայմաններում շուկայի բազմաթիվ հատվածներ ամբողջովին բաց են և բավարարվում են ներկրվող ապրանքատեսակներով միջոցով, այն դեպքում երբ Հայաստանում կան դրանց արտադրման համար ինչպես նյութատեխնիկական, այնպես էլ մարդկային համապատասխան ռեսուրսներ: Խոսքը մասնավորապես

¹² Հաշվարկների համար հիմք է հանդիսացել 2016թ. եվրոյի միջին տարեկան փոխարժեքը՝ 1 = 531.85: Հայաստանը թվերով վիճակագրական գրքույկ-2017: Երևան, ԱՎԾ, 2017, էջ 104:

¹³ Հաշվարկված է առավելագույն թվով աշխատակիցների դեպքերի համար:

¹⁴ Սաֆարյան Կ., Փոքր և միջին ձեռնարկատիրության հարկման խնդիրները ՀՀ-ում: Հայաստան. Ֆինանսներ և Էկոնոմիկա, #11 (125), նոյեմբեր, 2010, էջ 93-94:

վերաբերվում է արդյունաբերական արտադրանքին, որտեղ ՀՀ արտադրողների կողմից գործունեություն է ծավալվում հիմնականում սննդի արտադրության բնագավառում: Համապատասխան պետական աջակցության պայմաններում հնարավոր կլինի ոչ միայն նվազեցնել արտաքին շուկաներից կախվածությունը, այլև լուծել հարակից այլ խնդիրներ՝ կապված աշխատատեղեր ստեղծելու, գործազրկությունը կրճատելու, արտագաղթի նվազեցնելու, ժողովրդագրական իրավիճակը բարելավելու, միջին խավի ձևավորման և ընդհանրապես հասարակության կայացման հետ:

*Ներկայացվել է 28.11.2017թ.
Ընդունվել է տպագրության 26.12.2017թ.*